ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 03-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **«03» մարտի 2025թ.**

2025 թվականի մարտի 03-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Կառավարման խորհրդի հերթական նիստը՝ հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի կազմը հաստատելու մասին» թիվ 738-Ա որոշմամբ հաստատվել է Տեսչական մարմնի Կառավարման Խորհրդի հետևյալ կազմը՝

Դ. Խուդաթյան –ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ)

Կ. Ցուցուլյան –ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ – փրկարար ծառայության տնօրեն

Տ.Հակոբյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Տ. Դադունց – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ն. Հովակիմյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ե. Վարդանյան – Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ս. Թովմասյան – Կադաստրի կոմիտեի ղեկավար

Տ. Քեյան – «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ

Տ. Բաբայան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության» ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Դ. Սողոմոնյան - «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Ս. Հովսեփյան - «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»-ի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. Տեսչական մարմնի 2024 թվականի տարեկան հաշվետվության քննարկում.

2. Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում.

3. Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում.

4. Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի 1-ին, 2-րդ 3-րդ 4-րդ եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում.

5. Տեսչական մարմնի 2024 թվականի 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատման նախագծերի քննարկում և հաստատում:

Քվորում առկա է:

Էլեկտրոնային քվեարկությանը չեն մասնակցել՝

Ա. Ավանեսյանը – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Ս. Հովսեփյանը – «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»-ի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Կառավարման խորհրդի մյուս անդամները էլեկտրոնային կարգով քվեարկել են օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

Քվեարկության արդյունքները.

Օրակարգում ընդգրկված 2-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը, հեռակա քվեարկությամբ, ձայների «10» կողմ և «0» դեմ համամասնությամբ հաստատեց Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Օրակարգում ընդգրկված 3-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը, հեռակա քվեարկությամբ, ձայների «10» կողմ և «0» դեմ համամասնությամբ հաստատեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Օրակարգում ընդգրկված 5-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը, հեռակա քվեարկությամբ, ձայների «10» կողմ և «0» դեմ համամասնությամբ հաստատեց Տեսչական մարմնի 2024 թվականի 1-ին, 2-րդ 3-րդ և 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատումը:

Կառավարման խորհրդի անդամների կողմից օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առարկություն կամ հատուկ կարծիք չի ներկայացվել:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Դ. Խուդաթյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Վ. Պոկացյան**